

Աշխարհագրություն

УДК 911.52

ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ՆԵՐՈՒԺԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՏԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՍԿՋԲՈՒՆՔՈՎ
(Ախտության գետի վերին և միջին հոսանքների օրինակով)

Լ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Հայաստան

Բանալի քառեր. ռելիեֆ, ձեռնարկություն, ռեկրեացիա, գործակից, պիտանելիություն, գետավազան, դիրքադրություն, թեքություն, գնահատում:

Ներածություն: Ձրոսաշրջությունը վերջին տարիներին առավել մեծ նշանակություն է ստանում ՀՀ համար: Ըստ կառավարության պլանավորման ՀՀ այցելող զբոսաշրջիկների թիվն անհրաժեշտ է հասցնել մինչև 1 մլն., որը հզոր խթան կհանդիսանա երկրի տնտեսության զարգացման համար: Սա առավել հրատապ է դարձնում ՀՀ ռեկրեացիոն ներուժի գնահատման ոլորտում իրականացվող ուսումնասիրությունների ընդլայնումը, որոնք պետք է ընդգրկեն բոլոր մարզերը: ՀՀ տարածքում ռեկրեացիոն ռեսուրսների ուսումնասիրության, գնահատման և քարտեզագրման աշխատանքները սկսվել են համեմատաբար ուշ և ունեցել են միակողմանի բնույթ (հիմնականում իրականացվել են պատմամշակութային օբյեկտների գնահատում):

Հետազոտության նյութերը և մեթոդիկան: Ռեկրեացիոն ռեսուրսների գնահատման և պլանավորման գործում կարևոր է տարածքային միավորի ընտրությունը, որի շրջանակներում պետք է իրականացնել գնահատումը: Լեռնային երկրների համար առավել հարմար կադաստրային միավոր է գետավազանը, որը հարմար է ցանկացած տարածքային պլանավորում իրականացնելու համար [1]: Այն առավել տիպիկ և ամբողջական միավոր է՝ ընկած լեռնային երկրների տարածքային միավորների առանձնացման հիմքում և հանդիսանում է բնական երկրահամակարգ:

Ռեկրեացիոն ռեսուրսների գնահատման համար առավել նպատակահարմար է միջին և փոքր գետավազանների հետազոտությունը [2]: Գետավազանային սկզբունքը, կարող է հիմք հանդիսանալ ռեկրեացիոն ռեսուրսների գնահատման և դրա արդյունքների հիման վրա տնտեսության զարգացման համար: Դրա կիրառման ժամանակ, տարածքի հետազոտությունը իրականացվում է հետևյալ ուղղություններով.

– հետազոտության առարկայի ընտրություն և հիմնավորում;

* E-mail: mlevon2003@yahoo.com

– գետավազանի բնական միջավայրի գնահատում ըստ բաղադրիչների՝ նեկրեացիոն գործունեության ասպեկտով;

– գետավազանի տարածքի նեկրեացիոն զոնայավորում:

Որպես հետազոտության առարկա ընտրվել է Ախուրյան գետի վերին և միջին հոսանքների հատվածները: Նշված սահմաններում ավազանը (Շիրակի մարզ) զբաղեցնում է 2680,3 կմ²: Ախուրյանի վերին հոսանքը զբաղեցնում է 1154,78 կմ² մակերես:

Ախուրյանի միջին հոսանքի ավազանը ընդգրկում է Շիրակի սարահարթը հարակից լեռնային կառույցներով և զբաղեցնում է 1525,51 կմ² մակերես: Նրա միջին հոսանքը, ի տարբերություն Աշոցքի (վերին հոսանք), աչքի է ընկնում կլիմայական մեծ խայտաբղետությամբ, ռելիեֆի զգալի բազմազանությամբ, որն էլ հանդիսանում է կարևոր նախապայման նեկրեացիայի զարգացման համար:

Ախուրյան գետի ավազանը նեկրեացիոն առումով թույլ է ուսումնասիրված: Կան մի քանի հրատարակված աշխատանքներ, որոնք վերաբերվում են Աշոցքի նեկրեացիոն ռեսուրսների գնահատմանը և քարտեզագրմանը [3]:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են աշխարհագրական համեմատությունների, քարտեզագրական, լանդշաֆտային վերլուծությունների և բալային գնահատումների մեթոդները: Մակերեսների չափման համար՝ Universal Desktop Ruler ծրագիրը:

Հետազոտվող տարածքը բաժանվել է երկու նեկրեացիոն շրջանների. Վերին Ախուրյանի (Աշոցք) և Միջին Ախուրյանի (Շիրակ): Յուրաքանչյուր նեկրեացիոն շրջանն իր մեջ ներառում է մի քանի նեկրեացիոն ենթաշրջաններ, որոնք ունեն հանգստի կազմակերպման տարբեր հնարավորություններ:

Որևէ տարածքի նեկրեացիոն պիտանելիության որոշման ժամանակ, անհրաժեշտ է բացահայտել նրա գործառնական նշանակության չափը, այլ կերպ ասած, թե նեկրեացիայի քանի տեսակներ կարող են զարգանալ տվյալ շրջանում: Հաշվարկելով գործառույթների թիվը, կարելի է դուրս բերել տվյալ շրջանի նեկրեացիոն պիտանելիության գործակիցը, և դրանով գնահատել ցանկացած տարածքային միավորի նեկրեացիոն ներուժը:

Որպես հիմք, ընտրվել է 1:1000000 մասշտաբի ընդհանուր ֆիզիկաաշխարհագրական քարտեզը, որտեղից քարտեզաչափական մեթոդով և նշված ծրագրով, հաշվարկվել են ռելիեֆի ձևաչափության ցուցանիշները և առանձնացվել են գնահատման համար անհրաժեշտ տարածքային միավորները:

Ռեկրեացիոն պիտանելիության գործակցի հաշվարկը կատարվել է՝ ըստ Ե.Ա. Կոտլյարովի [4] բանաձևի՝ $K = C_1 / C_2$, որտեղ K -ն՝ պիտանելիության գործակիցն է, C_1 -ը՝ ենթաշրջանի նեկրեացիոն գործառույթների թիվը, իսկ C_2 -ը՝ շրջանի նեկրեացիոն գործառույթների թիվը:

Ռեկրեացիայի գոյություն ունեցող ավելի քան 40 տեսակներից, ուսումնասիրվող երկու գետավազանների համար, ընտրվել են 12-ը, որոնց պահանջարկը համեմատաբար ավելի մեծ է [5]: Աղյուսակ 1-ում ներկայացված են նեկրեացիայի տեսակներն ըստ ավազանների, որտեղից ակնհայտ է դառնում, որ Ախուրյանի վերին հոսանքի ավազանում նեկրեացիայի տարատեսակների համար պայմաններն ավելի սահմանափակ են (9 տեսակ):

Գետավազանների տարածքներում ենթաշրջանների առանձնացումը կատարվել է լանդշաֆտային 1:1000000 մասշտաբի քարտեզի հիման վրա [6], ըստ որի Ախուրյանի վերին և միջին հոսանքներում առանձնացվել են

հինգական ենթաշրջաններ, որոնք աչքի են ընկնում ռեկրեացիոն առավել մեծ հնարավորություններով (աղյ. 2):

Աղյուսակ 1

Ախուրյան գետի վերին և միջին հոսանքների ավազաններում ռեկրեացիոն գործունեության հնարավոր տեսակները

№	Ռեկրեացիոն գործունեության տեսակը	Վերին հոսանքը (Աշոցք)	Միջին հոսանքը (Շիրակ)
1	Զրոսանքային էսթետիկական	+	+
2	Զրոսանքային-սպորտային (առողջարարական քայլք)	+	+
3	Դահուկային և սահնակային զբոսանք	+	+
4	Լող	–	+
5	Թիավարություն	+	+
6	Ջրային դահուկներ	–	+
7	Արևային և օդային լողանք	+	+
8	Որսորդական և ձկնորսական գործունեություն	+	+
9	Հատապտուղների և սունկերի հավաքում	+	+
10	Էկոտուրիզմ	+	+
11	Ալպինիզմ	–	+
12	Լեռնադահուկային սպորտ	+	+
	Ընդամենը՝	9	12

Աղյուսակ 2

Ախուրյան գետի վերին և միջին հոսանքների ավազաններում ենթաշրջանների ռեկրեացիոն գործունեության տեսակները

Վերին հոսանք			Միջին հոսանք		
ռեկրեացիոն ենթաշրջանները	ռեկրեացիայի տիպը ¹	ընդամենը	ռեկրեացիոն ենթաշրջանները	ռեկրեացիայի տիպը	ընդամենը
Արփի լիճ	1÷3; 5; 9; 10	6	Շիրակի լեռնաշղթա	1÷3; 7÷10; 12	8
Եղնախաղի լեռնազանգված	1÷3; 7; 9; 10	6	Ախուրյան գետի հովիտ	1; 2; 8÷10	5
Ախուրյանի հին հուն	9; 10	2	Ջաջուռի լեռնանցք	1÷3; 7; 9; 10; 12	7
Գորշաբերդի ձոր	1÷3; 7÷10	7	Արագածի լեռնազանգված	1÷3; 7; 9÷12	8
Ջավախքի լեռնավահան	1÷3; 7; 9; 10; 12	7	Ախուրյանի ջրամբար ²	1; 2; 4÷10	9

Ծանոթագրություն՝ ¹ – Համարները վերցված են աղյ. 1-ից (հերթական համար);
² – Ախուրյանի ջրամբարի սահմանային ռեժիմն առայժմ հնարավորություն չի տալիս լիարժեքորեն օգտագործելու նշված ռեսուրսները:

Աղյուսակ 2-ում՝ ռեկրեացիոն առավել մեծ հնարավորություններով աչքի են ընկնում Ախուրյանի միջին հոսանքի համեմատաբար ցածրադիր շրջանները (Ախուրյանի ջրամբարի ենթաշրջան), ինչպես նաև ռելիեֆի առումով առավել բարդ ենթաշրջանները (Ջավախքի լեռնավահան, Արագած լեռնազանգված և այլն):

Ներկայացված ռեկրեացիոն գործառնությունների բնական նախադրյալների հիմքը հանդիսանում են ռելիեֆը և նրա ձևաչափական ցուցանիշները, քանի որ դրանք թույլ են տալիս կատարել դատողություններ տուրիզմի զարգացման հեռանկարների և ներուժի վերաբերյալ [7]:

Ախուրյան գետի վերին և միջին հոսանքների բարձրաչափությունը

Ախուրյան		Բարձրաչափական գոտիները									
ավազանը	մակերեսը	մինչև 1600		1600–2000		2000–2500		2500–3000		3000-ից ավել	
		կմ ²	%	կմ ²	%	կմ ²	%	կմ ²	%	կմ ²	%
վերին հոսանքը	1154,78	25,0	2,2	247,52	21,4	671,8	58,2	210,5	18,2	–	–
միջին հոսանքը	1525,51	420,7	27,6	578,6	37,9	333,8	21,9	118,3	7,8	74,1	4,8
ընդամենը	2680,3	445,7	16,6	826,12	30,8	1005,6	37,5	328,8	12,3	74,1	2,8

Ըստ ռելիեֆի բարձրաչափական տվյալների, որոնք ներկայացված են աղյ. 3-ում, Աշոցքի տարածքի 58,2%-ը (671,8 կմ²) ընկած է 2000–2500 մ սահմաններում, որտեղ հնարավոր է զարգացնել զբոսանքային-սպորտային (առողջարարական) զբոսաշրջությունը, ընդ որում, նշված գոտին մերձարևադարձային լայնություններում համարվում է այսպես կոչված “առույզացնող”: Ախուրյանի վերին հոսանքի կենտրոնական մասը, որտեղ տարածվում է “Արփի լիճ” ազգային պարկի բուֆերային գոտին, ընկած է նշված բարձրության վրա:

Ախուրյանի միջին հոսանքում 2000–2500 մ բարձրությունները զբաղեցնում են ավելի սահմանափակ մակերեսներ՝ 333,8 կմ², ինչը կազմում է միջին հոսանքի տարածքի 21,9%-ը: Այն տարածվում է հիմնականում Արագած լեռնազանգվածի հյուսիսային և հյուսիսարևմտյան լանջերին:

Ռելիեֆագիտն զգալի պահանջարկ ունի նաև 3000 մ-ից բարձր ընկած բարձրաչափական գոտին, որը կարող է օգտագործվել գլխավորապես սպորտային նպատակներով: Ախուրյանի վերին հոսանքի ավազանում նման գոտին բացակայում է, որով որպես ռեսուրս, վերջինս զիջում է միջին հոսանքին, որտեղ նշված գոտին զբաղեցնում է 74,1 կմ² (4,8%): Այստեղ ի հայտ են գալիս նաև ռելիեֆի սահմանափակող գործոններ, որոնցից առավել կարևոր է լեռնային հիվանդությունը: Վերջինիս տարածման սահմանների քարտեզագրումը և հրապարակումը հանդիսանում է կարևոր նախապայման ռելիեֆագիտների անվտանգության համար:

Ախուրյանի միջին հոսանքում լեռնային հիվանդության ի հայտ գալու սահմանը հասնում է 3500 մ, որի պատճառը ցամաքային կլիման է, և չնայած արագ վերելքի և մեծ ծանրաբեռնվածության դեպքում, 3000 մ-ից սկսած կարող են ի հայտ գալ հիվանդության առաջին նախանշանները:

Լանջերի թեքությունը

Ախուրյանի ավազանը	Թեքություններն աստիճաններով, °											
	0–3		3–7		7–12		12–20		20–30		30 և ավ.	
	կմ ²	%	կմ ²	%	կմ ²	%	կմ ²	%	կմ ²	%	կմ ²	%
վերին հոսանքը	483,54	41,9	471,44	40,8	154,3	13,7	36,0	3,1	9,5	0,8	–	–
միջին հոսանքը	906,52	59,4	465,68	30,5	125,25	8,2	21,5	1,4	2,5	0,1	4,0	0,3
ընդամենը	1390,06	51,9	937,12	34,9	279,55	10,4	57,5	2,1	12	0,4	4,0	0,1

Մույն հոդվածի սահմաններում վերլուծվել է նաև ռելիեֆի և երկու ցուցանիշ՝ լանջերի թեքությունը և կողմնադրությունը: Լանջերի թեքությունը

լեռնային երկրներում պայմանավորված է ռելիեֆի ինֆրակառուցվածքի ինքնարժեքի, տարածքի անցանելիության, ինչպես նաև արեգակնային էներգիայի բաշխվածության հետ (աղյ. 4):

Ըստ աղյուսակի տվյալների վերլուծության, թեքությունների առավել մեծ բազմազանությամբ առանձնանում է Ախուրյանի միջին հոսանքը, որտեղ թեքությունների ցուցանիշները տատանվում են 0–30⁰ սահմաններում: Ռելիեֆի նպատակներով ռելիեֆի գնահատման դեպքում, առավել մեծ պիտանելիություն ունեն միջին թեքության լանջերը, որոնք Ախուրյանի միջին հոսանքում զբաղեցնում են 465,68 կմ² (30,5%): Նման թեքություններն առավել նպատակահարմար է օգտագործել ձմեռային հանգստի և հատկապես լեռնադահուկային սպորտի զարգացման համար: Վերջինիս համար միակ խոչընդոտը կարող է լինել ձնածածկույթի առանձնահատկությունը, քանի որ ըստ երկու քարտեզների համադրման 3–7⁰ թեքությունները հիմնականում տարածվում են արևմտյան և մասամբ հարավային դիրքադրության լանջերին, որի պատճառով հնարավոր է ձնածածկույթի անկայունություն: Այս առումով պայմաններն ավելի գերադասելի են Ախուրյանի վերին հոսանքի ավազանում, որտեղ 3–7⁰ թեքության լանջերը զբաղեցնում են 471,44 կմ² (40,8%), այսինքն՝ ավազանի տարածքի գրեթե կեսը հնարավոր է օգտագործել ձմեռային սպորտաձևերի և հանգստի կազմակերպման համար: Ըստ քարտեզների համադրման այս թեքության տարածքների մոտ կեսը տեղաբաշխված է հարավային դիրքադրության վրա, որն ավելի քան 2000 մ բարձրության վրա ապահովում է բավականին հարմարավետ պայմաններ:

Յուրահատուկ ռեսուրս են հանդիսանում 30⁰-ից ավելի մեծ թեքության լանջերը, որոնք առկա են միայն Ախուրյանի միջին հոսանքի ավազանում՝ Արագած լեռնազանգվածի գագաթամերձ հատվածում: Նման թեքությունները զբաղեցնում են ընդամենը 4,0 կմ², որը կազմում է ամբողջ ավազանի 0,3%-ը: Չնայած փոքր մակերեսին, ռելիեֆի այս հատվածը լավ նախադրյալ ունի ալպինիզմի և էքստրեմալ տուրիզմի զարգացման համար:

Ըստ լանջերի կողմնադրության քարտեզի հետ համադրման այս թեքություններն ունեն մեծ մասամբ արևելյան կողմնադրություն և ստանում են բավականին շատ էներգիա, որն էլ առավել բարենպաստ է դարձնում տեղամասը ռելիեֆի յուրացման տեսանկյունից:

Ռելիեֆի ձևաչափական ցուցանիշների մեջ զգալի ռելիեֆի ճեղքումներ ունի նաև լանջերի կողմնադրությունը, որով պայմանավորված է արեգակնային էներգիայի չափաքանակը լեռնային երկրներում (աղյ. 5):

Աղյուսակ 5

Լանջերի կողմնադրությունը

Ախուրյանի ավազան	Հարթ տարածքներ		Լանջերի կողմնադրությունները							
			հյուսիսային		հարավային		արևելյան		արևմտյան	
	կմ ²	%	կմ ²	%	կմ ²	%	կմ ²	%	կմ ²	%
վերին հոսանք	437,26	37,9	95,42	8,2	276,7	23,9	96,91	8,4	248,49	21,5
միջին հոսանք	502,4	32,9	363,8	23,8	108,76	7,1	26,71	1,7	523,84	34,3
ընդամենը	939,66	35,0	459,22	17,1	385,46	14,4	123,62	4,6	772,33	28,8

Ըստ աղյ. 5 տվյալների վերին հոսանքի ավազանում գերակշռում են հարավային դիրքադրության լանջերը, որոնք զբաղեցնում են 276,7 կմ² (23,9%):

Հաշվի առնելով, որ Ախուրյանի վերին հոսանքի ավազանում ձևավորվում է կայուն ձնածածկույթ, հարավահայաց լանջերը լավ պայմաններ ունեն ձմեռային սպորտաձևերի զարգացման համար: Կայուն ձնածածկույթի հետ միասին, որի ձմեռային միջին հզորությունը կազմում է 60 սմ [8], Ախուրյանի վերին հոսանքի ավազանում այդ լանջերն աչքի են ընկնում նաև արևոտ եղանակներով, որոնք նպաստավոր են ինչպես ձմեռային, այնպես էլ ամառային արևային լողանքների համար:

Ի տարբերություն վերին հոսանքի, Ախուրյանի միջին հոսանքի ավազանում գերակշռում են արևմտյան դիրքադրության լանջերը, որոնք զբաղեցնում են Շիրակի ռելիեֆի շրջանի ամբողջ տարածքի 34,3%-ը (523,84 կմ²): 2000 մ բարձրության վրա, արևմտյան դիրքադրության լանջերը ստանում են գրեթե նույնքան գումարային ճառագայթում, ինչքան հարավայինը, միաժամանակ արևմտյան լանջերին առավել լավ ցուցանիշներ է գրանցվում ջրաջերմային գործակցի առումով: Վերջինս կազմում է 1,10 կկալ/սմ²:

Աղյուսակ 6

Ախուրյանի վերին և միջին հոսանքների ավազանների ռելիեֆի լիության գնահատումը

Վերին հոսանքի ավազան			Միջին հոսանքի ավազան		
Աշոցք	ռելիեֆի լիության ցուցանիշներ	K	Շիրակ	ռելիեֆի լիության ցուցանիշներ	K
2,8	Արփի լիճ	0,6	3	Շիրակի լեռնաշղթա	0,6
	Եղնախաղի լեռնազանգված	0,6		Ախուրյան գետի հովիտ	0,4
	Ախուրյանի հին հուն	0,2		Ջաջուռի լեռնաքար	0,6
	Գորշաբերդի ձոր	0,7		Արագածի լեռնազանգված	0,6
	Ջավախքի լեռնավահան	0,7		Ախուրյանի ջրամբար	0,8

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա իրականացվել է Ախուրյանի վերին և միջին հոսանքների ավազանների բնական պայմանների ռելիեֆի գնահատում: Ըստ աղյուսակ 6-ի տվյալների առավել մեծ ռելիեֆի լիությունները պիտեմենտային աչքի են ընկնում այն ենթաշրջանները, որոնց բնական պայմաններն ավելի բազմազան են և առկա են տարբեր բնական միջավայրեր: Այնպես է, որ Աշոցքի ռելիեֆի շրջանում առավել բարենպաստությամբ աչքի են ընկնում տարածքի կենտրոնական և հարավային տեղամասերը (Արփի լիճ, Գորշաբերդի ձոր):

Շիրակի ռելիեֆի շրջանում առավել բարձր միավորներ են հավաքել Ախուրյանի ջրամբարի ենթաշրջանը, ինչպես նաև Շիրակի սարահարթն եզերող լեռնաշղթաները և լեռնավահաններն ընդգրկող ենթաշրջանները:

Եզրակացություններ: Կատարված հետազոտությունների հիման վրա վստահորեն կարելի է ասել, որ Ախուրյանի վերին և միջին հոսանքների ավազաններն աչքի են ընկնում ռելիեֆի լիության զգալի ներուժով, ընդ որում առկա են ինչպես ամառային, այնպես էլ ձմեռային ռելիեֆի համար անհրաժեշտ բնական նախադրյալներ:

Ռելիեֆի լիությունները պիտեմենտային գործակցի փոփոխվում է 0,2–0,8 սահմաններում: Տարածքի ռելիեֆի լիություն գնահատման ժամանակ, որպես հիմնական տարր անհրաժեշտ է դիտարկել ռելիեֆը, որը լեռնային երկրներում ունի որոշիչ դեր բնական պայմանների ձևավորման գործում: Ռելիեֆի ռելիեֆի լիություն գնահատման ժամանակ մեծ նշանակություն են

ստանում ձևաչափական ցուցանիշները, քանի որ ներկայացված տարբեր տեսակների զարգացումը պայմանավորված է հենց այս ցուցանիշներով:

Մտացվել է 07.12.2012

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Мессерли Б., Айвз Дж.Д. Горы мира. М.: Ноосфера, 1999, 450 с.
2. Мильков Ф.Н. Бассейн реки как парадинамическая система и вопросы природопользования. // География и природные ресурсы, 1981, № 4, с. 11–18.
3. Մարտիրոսյան Լ.Մ. Չմեռային ներկայացված զարգացման նպատակով Աշոցքի տարածաշրջանի բնական պայմանների գնահատման սկզբունքները և քարտեզագրման մեթոդները: // Գ.ՊՄԻ գիտ. աշխ. ժողովածու, 2012, № 1.
4. Котляров Е.А. География отдыха и туризма. М.: Мысль, 1978, с. 69.
5. Мухина Л.И. Принципы и методы технологической оценки природных комплексов. М.: Наука, 1973, 65 с.
6. Մարտիրոսյան Լ.Մ. և ուրիշ. Շիրակի մարզի գյուղատնտեսության աշխարհագրություն: Եր., Գիտություն հրատ. ՀՀ ԳԱԱ, 2000, էջ. 117.
7. Бредихин А.В. Организация рекреационно-геоморфологических систем. Автореф. дис. на соискание уч. степ. док. географ. наук. М., 2008, с. 5.
8. Մարտիրոսյան Լ.Մ. և ուրիշ. Շիրակի մարզի գյուղատնտեսության աշխարհագրություն: Եր., Գիտություն հրատ. ՀՀ ԳԱԱ, 2000, էջ. 33.

Л. М. МАРТИРОСЯН

АНАЛИЗ РЕКРЕАЦИОННОГО ПОТЕНЦИАЛА ГОРНОЙ ТЕРРИТОРИИ ПО БАССЕЙНОМУ ПРИНЦИПУ (на примере верхнего и среднего течения реки Ахурян)

Резюме

В деле рекреационной оценки естественных ресурсов главной задачей становится выбор территориальной единицы, в рамках которой должна проводиться оценка. Наиболее удобной единицей в горной местности может стать речной бассейн. В работе исследован и оценен рекреационный потенциал верхнего и среднего течения реки Ахурян.

L. M. MARTIROSYAN

ANALYSIS OF RECREATIONAL POTENTIAL OF MOUNTAINOUS AREA ACCORDING TO THE RESERVOIR PRINCIPLE (on the example of upper and middle flows of the Akhuryan River)

Summary

The choice of territorial unit is becoming an important issue for the assessment and planning of recreational potential, in the frame of which the assessment should be done. A more convenient unit in a mountainous area can be a river basin. The upper and middle flow of the Akhuryan River were studied and estimated.